Արձանագրություն N3

«ՀՀ ԱԺ ԳՀԱՇՁԲ-17/2» ծածկագրով գնանշման հարցման
գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան 23 սեպտեմբերի 2017թ.
Ժամը 11:30

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Գ. Միսեյան
Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Ավագյան, Հ. Խաչատրյան, Վ. Քեռյան, Ն. Հարությունյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Ավագյան

1. **Փաստաթղթեր ներկայացնելու վերաբերյալ**

«ՀՀ ԱԺ ԳՀԱՇՁԲ-17/2» ծածկագրով գնանշման հարցման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ուսումնասիրելով առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը՝ արձանագրեց, որ «Նաիրիշին» ԲԲԸ-ի կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերում բացակայում էր հրավերի 2-րդ մասի 3.1 կետի 1) ենթակետի պահանջ հանդիսացող նախկինում պատշաճ ձևով իրականացրած համանման (նմանատիպ) պայմանագրի հաշիվ ապրանքագրերի պատճենները:

Ընդունվել է որոշում Կողմ՝5, դեմ՝0

2. **Նիստի կասեցման վերաբերյալ**

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված թիվ 1 հավելվածի 47-րդ կետը՝ հանձնաժողովը որոշեց նիստը կասեցնել և առաջարկել մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել նշված անհամապատասխանությունը և շտկված տարբերակը ուղարկել հանձնաժողովի քարտուղարի ars.avagyan@parliament.am էլեկտրոնային հասցեին մինչև ս.թ. սեպտեմբերի 27-ը ժամը 11:30-ն:

Ընդունվել է որոշում Կողմ՝5, դեմ՝0

3. **Հայտերի գնահատման վերաբերյալ**

«Նաիրիշին» ԲԲԸ-ի կողմից սահմանված ժամկետում շտկվել և ներկայացվել է անհամապատասխանությունը, որի վերաբերյալ հանձնաժողովը որոշեց՝ հաղթող մասնակից ճանաչել «Պոժմաստեր» ՍՊԸ-ին, որպես առավել ցածր գին ներկայացրած մասնակից:

Ընդունվել է որոշում Կողմ՝5, դեմ՝0

4. **Անգործության ժամկետի վերաբերյալ**

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվում պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Ընտրված մասնակցի հետ պայմանագիրը կնքվելու է անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող երեք օրացուցային օրվա ընթացքում:

Ընդունվել է որոշում Կողմ՝ 5, դեմ՝ 0

Հանձնաժողովի

նախագահ՝ _____ Գ. Մխեյան

անդամներ՝ _____ Ա. Ավագյան

_____ Հ. Խաչատրյան

_____ Վ. Քեռյան

_____ Ն. Հարությունյան

Քարտուղար՝ _____ Ա. Ավագյան